

ԿՐՈՆԱ—ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 մարտ 1994 թ.)

«Յաւնուն Հօր և Որդւոյ և հոգւոյն Սրբոյ, Ամէն»:

«Ով իցէ մարդ, որ կեցցէ և ոչ մեղիցէ»—կարդում ենք մենք Սուրբ Ավետարանում: Այսինքն՝ ո՞վ է այն մարդը, որ ապրում է այս աշխարհում և որևէ մեղք չի գործում, որևէ սխալմունք չունի, որևէ անարդար գործ չի կատարել:

Սա, սիրելի հավատացյալներ, գրված է Սուրբ Ավետարանում երկու հազար տարի առաջ, բայց նա մնում է այժմեական տևապես և անցյալ դարերի ընթացքում, և այսօր մեր կյանքում, և հավանաբար այժմեական պիտի լինի միշտ, ինչքան ապրեն մարդիկ, որովհետև մարդ արարածը իսկապես մեղքի, սխալմունքի, անկատարության ենթակա մի արարած է: Դրա մեջ կա մի ողբերգություն, անշուշտ, բայց կա նաև մի իմաստ, որ փառավորում է կամ կարող է փառավորել մարդու կյանքը: Մեր Մայր Եկեղեցին հրավիրում է մեր հավատացյալներին, որ իրենց կյանքի ընթացքում ճիգ թափեն, փորձեն, աշխատեն սրբագրել իրենց սխալները, հեռու մնան մեղավոր գործերից, պայքարեն ամեն մեկը իր անձի դեմ, մեղքից փրկելու համար իր անձը: Պետք է հաստատ համոզված լինենք, որ այս աշխարհի վրա մարդու մեծագույն հաղթանակն է՝ հաղթահարել իր թերությունները, իր մեղքերը: Սա մեծագույն հաղթանակն է՝ որևէ մարդու համար:

Ահա, հետևաբար, ինչպես մարդկային ողբերգությունից բխում է նաև մարդու փառավորում, փրկություն, որով նա դառնում է, ինչպես Ավետարանն է բնորոշում, Աստուծո որդի: Հիսուս իր կյանքի ընթացքում այս հարցերի շուրջ հաճախ խոսել է իր աշակերտներին և զինք շրջապատող ժողովրդին: Այն ատեն երկու հազար տարի առաջ Հիսուս խոսել է մեղքի և փրկության հար-

ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ
Գործ Լևոն դպիր Զաքյանի

ցի մասին: Հաճախ նա օգտագործել է նաև առակներ, պատումներ, որոնք խոսում են հավիտենական ճշմարտությունների մասին:

Ահա այդ առակներից մեկը, որ այսօր կարդացվեց Ս. պատարագի ընթացքում: Այդ առակներից մեկը կոչվում է «Անիրավ տնտեսի» առակ: Պատումը հետևյալն է. եղել է մի տանուտեր, մի հարուստ մարդ, ունեցել է կալվածքներ: Ունեցել է նաև մի գործերի կառավարիչ, մի տնտես, ասում է Ավետարանը, որը խաբեություններ է արել ի վնաս տանտիրոջը, հօգուտ իր գրպանի, այսինքն հափշտակումներ: Տերը իմանում է այդ մասին, բավական ժամանակ հետո, կանչում է նրան և ասում, «տուր զհամար տնտեսութեան քո», հաշիվը տուր քո գործերի, քո տնտեսության մասին, որովհետև դու այլևս չես աշխատելու ինձ մոտ, քեզ արձակում եմ: Տնտեսը, որ անխելք մարդ չէր, խորամանկ գործերի է դիմում, պարտապանների հետ համաձայնություններ կնքում, որով իր գրպանի օգտին ապահովում է որոշ գումարներ, ի վնաս տանտիրոջը: Այսինքն, ինքը շարունակում է իր անիրավ գործընթացը, որպեսզի ապահովե իր ապագա անձնական կյանքը: Տանուտերը այդ մասին էլ իմանում է և մտածում, որ այդ տնտեսը անխելք մարդ չի եղել և իմաստուն կերպով գործել է հօգուտ իր գրպանի: Սակայն, այսպիսով նա մնաց էլի անիրավ մարդ, անարդար արարած: Եվ այստեղ Հիսուս մի նշանավոր խորհրդածություն է կատարում. ասում է՝ այս աշխարհի որդիները ավելի իմաստուն են, քան Լուսո որդիները, ինչ որ նույնպես ճշմարիտ է: Բոլոր նշանավոր գրական գործերի մեջ, պատմության ընթացքում, մանավանդ էպոսների մեջ, ուր խոսվում է հերոսական վարք ունեցող մարդկանց մասին, այս ճշմարտությունը միշտ բացահայտվում է:

Օրինակ, մեր նշանավոր էպոս «Սասունցի Դավիթ»-ի պարագային: Եթե հիշում եք, էպոսի մեջ Դավիթը կանգնած է դեմ-հանդիման իր թշնամուն. թշնամին միշտ խորամանկ է և անազնիվ և երբ պարտվում է, տարբեր արդար միջոցներով ուզում է ներողամտությունը շահել Դավթին: Սասունցի Դավիթը միշտ միամիտ է և խաբվում է Մարա Մելիքի բոլոր չարագործ հնարքներից: Նա միշտ խաբվում է, որովհետև բարի է, ազնիվ է, որովհետև Լուսո որդի է: Բոլոր էպոսներում, օտար ժողովուրդների մեջ էլ, հերոսները միամիտ մարդիկ են, բարեմիտ մարդիկ են, և շուտ են խաբվում: Շատ ուսանելի է և խորիմաստ Հիսուսի եզրակացությունը: Եվ առակի վերջում Հիսուս հանգում է նաև մի այլ նշանակալից եզրակացության, որ չի կարելի ծառայել միաժամանակ և՛ Աստծուն, և՛ մամոնային, այսինքն փողին: Հակադիր դիրքեր են դրանք, և մեր Եկեղեցին հրավիրում է մեզ բոլորիս, մեր ժողովրդի զավակներին, ձեզ բոլորիդ, նաև մեր հոգևորականներին, որպեսզի լինենք Լուսո որդիներ, հեռու մնանք անիրավ տնտեսների հոգեբանությունից և անարդար արարքներից: Եթե օրինակ պիտի վերցնենք անիրավ տնտեսի պատումից, պետք է մտածենք ինչպես անիրավ տնտեսը իր անիրավ գործի համար օգտագործեց իր խելքը, իր իմաստությունը, իր ճարպկությունը, այնպես էլ մենք՝ իբրև Լուսո որդիներ, մեր խելքը, մեր իմաստությունը, մեր ճարտարությունը օգտագործենք բարի գործերի օգտին: Բարի գործենք ոչ թե սեփական շահի համար, այլ բարիք գործենք մեր նմաններին, կարիքավորներին, չքավորներին, բարիք գործենք մեր Եկեղեցուն, մեր ազգին, մեր հայրենիքին, անվավաստիկ Լուսո որդիների կոչումը:

Շարունակելով մեր խոսքը հիշենք, թե՝ այս վերջին տարիների պայմաններում, դժբախտաբար մեր ժողովրդի զավակների կյանքում բազմանում են անիրավ տնտեսները, գրեթե բոլոր մակարդակների վրա: Անիրավ տնտեսներ կան այսօր շատ տեղերում, կյանքի տարբեր բնագավառներում: Վստահ եմ, որ դուք հաճախ զգում եք որոշ անիրավություններ, որ կատարվում են մեր հայրենիքում անիրավ տնտեսների ձեռքով՝ ի վնաս մեր ժողովրդին, ի վնաս այն օգնությունների, որ առաքվում են արտասահմանից, որպեսզի բաշխվեն կարիքավորներին, որբերին, զգաստամարտիկներին, բայց մի կարևոր մասը հափշտակվում են անիրավ տնտեսների կողմից, անձնապես իրենց օգուտի համար, անձնապես հարստանալու համար: Ահավասիկ այսօրվա անիրավ տնտեսները մեր կյանքում:

Մեր Եկեղեցին կոչ է անում բոլորին, որ Աստված բարոյական մաքուր ուժ, խիղճ պարգևի մեր ազգին, մեր Եկեղեցու զավակներին՝ հեռու մնալու համար անիրավ գործերից, աշխատելով սրբագրել իրենց մեղքերը, սխալները, պայքարեն նրանց դեմ և հասնեն բարձունքները, բարոյական բարձունքները Ղուսո որդիների, ինչպես պատվիրում է մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս:

Մենք, եթե իսկապես քրիստոնյա ենք, պետք է ձգտենք դառնալ Ղուսո որդիներ և ծառայենք ո՛չ թե մամոնային, այլ Աստծուն:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանդ»: Ամեն»: